

5.18. 2011 թվականի հունիս ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2011թ. հունիսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.18.1. Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Հունիսին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան և Արարատ քաղաքներում տեղակայված 14 դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Արուսյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 144 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 26889 փորձանմուշ:

Երևան քաղաքի հինգ դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 493 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.8 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 7709, ծծմբի երկօքսիդի համար՝ 7158, ազոտի օքսիդների համար՝ 1037, գետնամերձ օզոնի համար՝ 184 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 75 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի մշտական դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.1 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.4 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 190 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վանաձոր քաղաքի մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով վերցված մթնոլորտային օդի 161 փորձանմուշներում և պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 143 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ալավերդի քաղաքի մշտական երկու դիտակայաններում, ինչպես նաև ավտոմատ կայանում, ակտիվ նմուշառման եղանակով վերցված մթնոլորտային օդի 131 փորձանմուշներում և պասիվ նմուշառման 18 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 108 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5051 դիտարկում:

Հրազդան քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 78 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 6.7 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան

րացիան՝ 5.2 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 95 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 30 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում: Մայիս ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 112 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 913, ծծմբի երկօքսիդի համար՝ 2246, ազոտի օքսիդների համար՝ 779 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ:

Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 12 և 10 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 28, 72 և 40 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում ավտոմատ եղանակով վերցված օդի 30 փորձանմուշներում ազոտի երկօքսիդի պարունակությունը դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում:

Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև) վերահսկվող նյութերի պարունակությունը, 2011թ. հունիս

մգ/դմ³

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը				
	02	05	06	12	13
Ջրածնային ցուցիչ (рН)	7.46	6.80	6.84	6.04	6.15
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՄիմ/սմ)	159.4	44.0	20.2	33.5	17.3
Սուլֆատ իոն	6.26	2.03	0.93	2.11	0.97
Քլորիդ իոն	1.37	0.26	0.13	0.33	0.22
Նիտրատ իոն	2.713	2.015	0.919	15.060	1.110
Ամոնիում իոն	3.346	0.139	0.088	1.645	0.699
Ընդհանուր ֆոսֆոր	2.2225	0.2679	0.0496	2.2225	0.2679
Նատրիում	0.6709	0.1645	0.0681	0.6709	0.1645
Կալիում	2.8223	0.4391	0.1509	2.8223	0.4391
Մագնեզիում	0.5585	0.1977	0.1531	0.5585	0.1977
Կալցիում	5.1384	4.3423	2.6778	5.1384	4.3423
Երկաթ	0.0324	0.0076	0.0060	0.0324	0.0076
Կապար	0.0002	0.0001	0.0001	0.0002	0.0001
Կադմիում	0.0000	0.0000	0.0000	0.0000	0.0000
Պղինձ	0.0045	0.0008	0.0005	0.0045	0.0008
Ցինկ	0.0011	0.0005	0.0011	0.0011	0.0005
Քրոմ	0.0003	0.0001	0.0001	0.0003	0.0001
Արսեն	0.0003	0.0001	0.0001	0.0003	0.0001
Նիկել	0.0011	0.0003	0.0003	0.0011	0.0003

5.18.2. Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Հունիսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 39 գետերի, Ապարանի, Արփիլձի, Ախուրյանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 117 դիտակետերում: Վերցված 126 փորձանմուշներում որոշվել է 20-42-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2011թ. հունիս

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՄԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները														
			Լուծված թթվածին (ՄԹԿ՝ > 6.0 մգ/դմ ³)	ԹԿՊ ₅ (ՄԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	ԹԿՊ (ՄԹԿ՝ 30.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՄԹԿ՝ 0.024 մգ/դմ ³)	աննիտրատ իոն (ՄԹԿ՝ 0.39 մգ/դմ ³)	սուլֆատ իոն (ՄԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)	ալյումին (ՄԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	քրոմ (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	երկաթ (ՄԹԿ՝ 0.5 մգ/դմ ³)	մանգան (ՄԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	աղինձ (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	ցինկ (ՄԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	սելեն (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	կադմիում (ՄԹԿ՝ 0.005 մգ/դմ ³)
Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.165	0.003	-	-	0.037	-	-	-	-
	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	-	0.070	0.003	-	-	-	-	-	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	-	-	-	-	-	-	0.072	0.003	-	-	-	-	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	-	-	0.043	2.410	-	0.087	0.002	0.002	-	-	0.005	-	-	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	-	-	0.034	-	-	0.374	0.003	-	-	0.019	0.004	-	-	-
	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	-	-	-	0.039	-	-	0.375	0.003	-	-	0.025	0.018	0.024	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	-	0.041	-	-	0.387	0.003	-	-	0.028	0.017	0.021	-	-
Ձորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	323.3	0.324	0.004	-	-	-	-	-	-	-
	10	Գետաբերան	-	-	-	-	-	-	0.356	0.004	-	-	0.033	0.004	-	-	-
Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.046	-	-	0.308	0.003	-	-	0.036	0.002	-	-	-
	12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	-	0.371	0.004	-	-	0.033	0.002	-	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	-	-	-	-	-	-	0.187	0.003	-	-	-	0.002	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	-	-	119.3	0.677	-	-	0.686	-	-	-	-	0.006
Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	-	4.3	-	-	-	-	0.302	0.002	-	-	0.019	0.002	-	-	-
	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	-	-	-	-	0.448	-	0.270	0.003	-	-	-	0.002	-	-	-
	17	ք.Իջևանից 1 կմ վերև	-	-	-	0.034	-	-	0.307	0.003	-	-	0.019	0.002	-	-	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	-	0.044	-	-	0.315	0.003	-	-	-	0.002	-	-	-
Գետիկ	19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.320	0.003	-	-	-	0.002	-	-	-
	20	Գետաբերան	-	-	-	0.039	-	-	0.299	0.002	-	-	-	0.002	-	-	-
Արաքս	25	Մուրմալու գյուղի դիմաց	-	-	-	-	-	-	0.193	0.006	0.002	-	-	0.002	-	-	-
	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	-	-	0.086	-	-	-	-	-	2.301	0.068	0.006	-	-	-
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	3.4	-	0.095	-	-	0.401	0.008	0.004	0.686	0.020	0.003	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները													
			Լուծված թթվածին (ՍԹԿ՝ > 6.0 մգ/դմ ³)	ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	ԹԿՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)	ալյումին (ՍԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	Քրոմ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	Էրկաթ (ՍԹԿ՝ 0.5 մգ/դմ ³)	մանգան (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	ցինկ (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	սելեն (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)
Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.252	0.006	-	-	-	-	-	-
	32	Ամասիա գյուղից 1 կմ ներքև	-	-	-	-	-	-	0.277	0.005	-	-	-	-	-	-
	33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	-	3.4	-	-	-	-	0.321	0.007	-	-	0.022	0.002	-	-
	34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	-	-	-	0.140	1.196	-	-	-	0.002	1.398	0.063	0.005	-	-
	35	Երվանդաշատ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	-	-	0.008	-	-	-	-	-	-
Աշոցք	37	Գետաբերան	-	4.1	-	-	-	-	0.08	0.005	-	-	-	-	-	-
Կարկաչուն	38	Գետաբերան	-	-	-	0.188	-	-	0.316	-	-	0.047	0.002	-	-	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	-	-	0.034	-	-	-	-	-	-	-	-	-	-
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	-	-	0.058	-	-	-	-	-	-	-	-	-	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	4.86	-	36	0.081	-	121.3	-	-	-	-	-	-	-	-
Քասախ	43	ք.Ապարանից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.337	0.003	-	-	-	0.002	-	-
	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	-	4.0	-	-	0.768	-	0.247	0.003	-	-	-	0.002	-	-
	45	ք.Աշտարակից 1 կմ վերև	-	-	-	-	-	-	0.063	-	-	-	-	-	-	-
	46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	-	-	-	-	-	-	0.063	-	-	-	-	-	-	-
	47	Գետաբերան	-	4.0	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Գեղարոտ	48	Արագած գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.155	-	-	0.126	-	0.028	-	-
	49	Գետաբերան	-	4.0	-	0.028	-	-	-	0.005	0.003	1.543	0.049	0.004	0.023	-
Հախվերդ	50	Փարպի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	-	0.124	0.006	-	-	-	-	-	-
Հրազդան	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	3.6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	4.1	52	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	4.06	4.3	-	0.252	8.153	-	-	-	-	-	-	-	-	-
	56	Գետաբերան	5.7	3.8	40	0.147	2.794	155.3	-	-	-	-	-	-	-	-
Մարմարիկ	57	Հանքավան գյուղից 0.5 կմ վերև	-	4.1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	5.9	-	0.481	1.332	285.9	-	-	-	-	-	-	-	-
Վեղի	80	Ուրցաձոր գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.086	0.002	-	-	-	-	-	-
	82	ք.Արարատից 2 կմ ներքև	-	-	-	-	0.469	-	0.444	0.005	-	0.621	0.026	0.003	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՄԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները													
			Լուծված թթվածին (ՄԹԿ՝ > 6.0 մգ/դմ ³)	ԹԿՊ ₅ (ՄԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	ԹԿՊ (ՄԹԿ՝ 30.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՄԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	ամոնիում իոն (ՄԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	սուլֆատ իոն (ՄԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)	ալյումին (ՄԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	Քրոմ (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	երկաթ (ՄԹԿ՝ 0.5 մգ/դմ ³)	մանգան (ՄԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	ցինկ (ՄԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	սելեն (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)
Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	0.090	0.002	-	-	-	-	-	-	-
	84	ք.Վայքից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	0.176	0.002	-	-	-	-	-	-	-
	85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	0.201	0.003	-	-	-	0.002	-	-	-
	86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	0.180	0.003	-	-	0.029	0.002	-	-	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	0.538	0.004	-	0.642	0.037	0.003	-	-	-
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	0.586	0.003	-	0.828	0.046	0.003	-	-	-
Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	0.114	-	-	-	-	0.004	-	-	-
	90	Գետաբերան	-	3.3	-	-	-	-	0.135	-	-	-	-	0.006	-	-
Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	-	-	-	-	-	0.072	-	-	-	-	0.004	-	-	-
	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	-	-	-	-	0.088	-	-	-	-	0.010	-	-	-
	93	ք.Կապանից 0.8 կմ վերև	-	-	-	-	-	0.083	-	-	-	-	0.008	-	-	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	-	-	-	-	0.170	-	-	-	0.0290	0.039	0.026	-	-
Արծվանիկ	96	Գետաբերան	-	-	-	0.072	0.777	365.0	0.065	0.003	-	-	0.024	0.007	0.063	0.002
Գեղի	97	Աջիբաջ գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.113	-	-	-	0.002	-	-	-
	98	Գետաբերան	-	-	-	-	-	-	0.069	-	-	-	-	-	-	-
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.125	0.006	-	-	-	-	-	-
	100	ք.Սիսիանից 1 կմ վերև	-	-	-	-	-	-	0.091	0.022	-	-	-	-	-	-
	101	ք.Սիսիանից 1 կմ ներքև	-	-	-	0.059	0.734	-	0.110	0.019	-	-	-	-	-	-
	102	Տարթն ՀԷԿ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	-	0.115	0.005	-	-	0.002	-	-	-
Սիսիան	103	Արևիս գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.080	-	-	-	-	-	-	-
	104	Գետաբերան	-	-	-	-	-	-	0.156	0.003	-	-	-	0.002	-	-
Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	-	-	-	-	-	-	0.115	0.011	-	-	-	-	-	-
	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	3.6	-	0.321	2.602	-	-	0.018	-	-	-	0.002	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները														
			Լուծված թթվածին (ՍԹԿ՝ > 6.0 մգ/դմ ³)	ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	ԹԿՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)	ալյումին (ՍԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	քրոմ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	երկաթ (ՍԹԿ՝ 0.5 մգ/դմ ³)	մանգան (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	ցինկ (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	սելեն (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	կադմիում (ՍԹԿ՝ 0.005 մգ/դմ ³)
Արփիլիճ ջրամբար	109	Ամբարտակի մոտ	-	-	-	-	-	-	0.005	0.002	0.743	0.027	0.002	-	-	-	
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	-	-	-	0.060	-	-	0.075	0.007	-	-	0.002	-	-	-	
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	-	-	-	-	-	-	0.133	-	-	-	0.005	0.019	-	-	
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	-	3.6	-	0.067	0.490	-	-	-	-	-	-	-	-	-	
Ազատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	-	4.3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	-	-	-	-	-	-	0.137	0.002	-	-	-	-	-	-	